Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«_03_» _09_ 20_13_թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Համալսարանի ուսումնամեթոդական հանձնաժողովը կազմավորվում է ռաումնադաստիարակչական և ուսումնամեթոդական աշխատանքների կատարման նպատակով՝ ոչ պակաս հանձնաժողովի 5 անդամներով, պրոֆիլային առարկաների առաջատար դասախոսներով:
2. Ուսումնամեթոդական հանձնաժողովի աշխատանքների անմիջական ղեկավարությունը իրագործում է ռեկտորը (ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը):
3. Ուսումնամեթոդական հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
   - ուսումնադաստիարակչական և ուսումնամեթոդական աշխատանքների բարելավման միջոցառումների մշակում
   - լավագույն դասախոսների աշխատանքի փորձի քննարկումը, ընդհանրացումը և տարածումը
   - ուսումնական պարապմունքների անցկացման, լաբորատոր, ստուգողական, ուսումնական և արտադրական պրակտիկայի մեթոդական ցուցումների կազմում, քննությունների, ստուգարքների անցկացման հսկողություն
   - ավարտական (պետական), անցողիկ քննական տոմսերի նախապատրաստում, ուսումնասիրում և քննարկում, ձեռնարկների դիտարկում և հաստատում
   - ուսումնական ծրագրերի քննարկում, նորագույն գիտական նվաճումների հարցերի ծրագրերի լրացման և ճշգրտման վերաբերյալ առաջարկությունների ներդրում
   - ուսուցման որակի բարձրացման միջոցառումների մշակում և ուսանողների առաջադիմության վերլուծություն

4. Հանձնաժողովի նախագահի և անդամների պարտականությունները՝

ա/ նախագահը պարտավոր է՝

- կազմակերպել հանձնաժողովի աշխատանքները
- կազմել հանձնաժողովի աշխատանքային պլանները
- ուսումնասիրել հանձնաժողովի անդամների աշխատանքների կազմակերպումը
- ներկայացնել հաշվետվություն գիտխորհրդին

բ/ հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

- հաճախել հանձնաժողովի նիստերին
- ակտիվ մասնակցել և կատարել հանձնաժողովի նախագահի կողմից ընդունված որոշումները

5. Հանձնաժողովը պետք է ունենա հետեյալ վաստաթղթերը՝

- աշխատանքային պլան
- նիստերի արձանագրություններ
- մեթոդական մշակումներ
- ուսումնամեթոդական բոլոր գործող փաստաթղթերի նմուշներ
- հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին հաշվետվություն: